

**Հարգելի Հաճախորդներ** խորհուրդ ենք տալիս ուշադրություն դարձնել հետևյալ կանոնների պահպանմանը մանրէաբանական լաբորատորիայում հետազոտությանը պատրաստվելուց առաջ.

**Մանրէաբանական լաբորատոր հետազոտության նպատակով կենսաբանական նյութի նմուշառումն իրականացվում է նախքան հակաբիոտիկներով բուժում սկսելը՝ խստորեն պահպանելով նմուշառման տեխնիկայի և ապանեխման բոլոր կանոնները:**



### **Ուրոգենիտալ քսուքներ**

Ուրոգենիտալ քսուքներ հանձնելուց 24ժամ առաջ զերծ մնալ տեղային պրեպարատների օգտագործումից, չլողանալ (լողանալ երեկոյան) և ցանկալի է նմուշառումը իրականացնել մինչև միզարտադրությունը կամ միզելուց 2-3ժամ հետո: Կանանց մոտ նմուշառումն իրականացվում է մինչ դաշտանային ցիկլի սկիզբը կամ ցիկլի վերջանալուց 1-2 օր հետո (դաշտանային ցիկլի ժամանակ վերցրած նմուշի լաբորատոր հետազոտության արդյունքները լիարժեք չեն):

Ուրոգենիտալ քսուքները հանձնել հակաբիոտիկային և հակասնկային թերապիայից առաջ կամ 7-14օր հետո (եթե նշանակումներ կան բժշկի կողմից):



### **Մեզի մանրէաբանական հետազոտություն**

Պահպանել արտաքին սեռական օրգանների հիգենան: Կանանց խորհուրդ է տրվում մեզը հանձնելու ժամանակ հեշտոցը փակել բամբակյա տամպոնով (անալիզը հանձնելուց հետո բամբակյա տամպոնը հեռացնել): Մեզը հանձնել **ստերիլ տարայի մեջ**: Անհրաժեշտ է հանձնել առավոտյան մեզը հետևյալ եղանակով՝ մեզի առաջին մասը բաց թողնել, ստերիլ տարայի մեջ հավաքելով միջին մասը: Մեզը հասցնել լաբորատորիա 2ժամվա ընթացքում: Մեզի մանրէաբանական հետազոտությունն իրականացվում է մինչև հակաբակտերիալ թերապիայի ընդունումը, ինչպես նաև բուժման կուրսերի միջև ընկած ժամանակահատվածում կամ պատրաստուկի վերջին ներմուծումից 24 ժամ անց, իսկ եթե հիվանդը ստանում է հակաբիոտիկային բուժում, ապա ուղեգրում անպայման նշվում է այդ մասին:



## Էյակուլյատի(սերմնահեղուկի) մանրէաբանական հետազոտություն

1. Սերմնահեղուկի մանրէաբանական հետազոտության նպատակով նմուշառումից առաջ արգելվում է ակոնիոլի օգտագործումը,ինպես նաև շոգեբաղնիքի և սոլյարիի ընդունումը
2. Նմուշառումը կատարվում է երեք օրվա սեռական հարաբերության դադարից հետո
3. Պահպանել արտաքին սեռական օրգանների հիգենան
4. Սերմնահեղուկը հանձնել **ստերիլ տարայի մեջ**
5. Սերմնահեղուկի տեղափոխումը լաբորատորիա իրականացնել 2 ժամվա ընթացքում



## Կղանքի դիսբիոզի հետազոտություն

Հետազոտության նյութ է հանդիսանում ինքնուրույն արտաթորման արդյունքում ստացված աղիների արտադրությունը 1-2գրամ(լոբու հատիկի չափով), այն հիմնականում նմուշառվում է միջին չափաբաժնից, որը հավաքվում է մաքուր թղթի վրա (խորհուրդ չի տրվում կղանքը հավաքել զուգարանից), տեղափոխվում **ստերիլ տարայի մեջ**(լուցկու տուփ,պամպերս և այլ ոչ ստերիլ տարաներ չի ընդունվում): Արգելվում է հոգնայի կամ լուծողականների օգտագործման արդյունքում ստացված աղիների արտադրության հետազոտությունը:

Նմուշը պետք է գերծ լինի մեզի մնացորդից:

Անհրաժեշտ է 1-3օր առաջ պահպանել դիետա՝ բացառելով աղիներում խմորում առաջացնող սննդամթերքի,կաթնամթերքի,ակոնիոլի, հակաբիոտիկների և մանրէային պատրաստուկների (բիֆիդոբակտեր,լակտոբակտեր,աղիքայի ցուպիկ և այլն) ընդունումը:

Նմուշը մանրէաբանական լաբորատորիա է տեղափոխվում երկու ժամվա ընթացքում:Նմուշի լաբորատորիա արագ տեղափոխման անհնարինության դեպքում թույլատրվում է այն +4 աստիճան Ցելսիուսի(°C) ջերմաստիճանային պայմաններում պահել 4 ժամ:

Արգելվում է նմուշի սառեցնելը:



## Կաթի մանրէաբանական հետազոտություն

Կրծքի կաթի նմուշառումն իրականացվում է կրծքով կերակրելուց առաջ կամ կերակրելուց 2 ժամ հետո՝ նախքան հակաբիոտիկային բուժում սկսելը:

Ձեռքերը և կուրծքը լվանալ: Պտուկների մակերեսը մշակել 70%-ոց սպիրտով: Կաթի առաջին բաժինը բաց թողնել, վերցնել միջին բաժինը **առանձին ստերիլ տարաների մեջ** համապատասխանաբար աջ և ձախ կրծքերից և հասցնել լաբորատորիա 2 ժամվա ընթացքում, իսկ +2-ից +8 աստիճան Ցելսիուսի(°C-ի) դեպքում թույլատրվում է պահել 5-6 ժամ:



## Բերանի խոռոչի քթմայանի հետազոտություններ

Հետազոտությանը պատրաստվելուց առաջ ցանկալի է պահպանել հետևյալ կանոնները . չի կարելի ուտել(կամ 4-5 ժամ ուտելուց հետո), խմել, լվանալ ատամները, ողողել բերանը, ծխել:

## Խորիսի մանրէաբանական հետազոտություն

Պահպանել բերանի խոռոչի հիգիենան: Հավաքել առավոտյան խորիսը(ուտելուց առաջ): Խորիսը հավաքել **ստերիլ տարայի մեջ**:



## Աչքի մանրէաբանական հետազոտություն

Նմուշառումն իրականացվում է նախքան հակաբիոտիկային բուժման սկսելը, եթե դեղորայքային բուժումն այնուամենայնիվ սկսված է, ապա նմուշառումը կարելի է կատարել այն դադարեցնելուց 6 ժամ հետո:

Նմուշառումը թույլատրվում է կատարել առավոտյան՝ նախքան լվացվելը, աչքի կաթիլներ ընդունելը: